«Հաստատում եմ»

ՀՀ Լոռու մարզի Վանաձորի ծովակալ

Իսակովի անվան թիվ 23 հիմնական

դպրոցի տնօրեն [signature] Տ. Հովսեփյան

« » ______ 2023թ.

Դասղեկի պլանը բխում է
դասղեկի՝ դպրոցի կանոնադրությամբ
և պաշտոնային նկարագրով
սահմանված գործառույթներից
և դպրոցի տարեկան դաստիարակչա-
կան պլանի [illegible] պլաներից:
[illegible]՝ [illegible] Գ. Յոլ
[illegible]՝ [signature] Գ. [illegible]

ԴԱՍԱՐԱՆԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԵԿԱՆ ՊԼԱՆ

Լոռի ______ Վանաձոր

մարզ ______ համայնք

ծովակալ Իսակովի անվան թիվ 23 դպրոց

ուսումնական հաստատության անվանումը

VIա

դասարանը

Լուսինե Սամվելի Փանոյան

դասարանի ղեկավարի անունը, հայրանունը, ազգանունը

2023-2024 ուսումնական տարի

Դասղեկի աշխատանքի փուլային նկարագրություն

Ուսումնական տարվա սկիզբ

1. Վերստուգել աշակերտների անվանացանկը
2. Կազմել դասարանի սոցիալական անձնագիրը
3. Սպառիչ տեղեկություններ հավաքել աշակերտների՝ լրացուցիչ կրթական հաստատություններում , խմբակներում մասնակցության մասին:
4. Կազմել դասարանի դաստիարակչական աշխատանքի պլան

Ամենօրյա աշխատանքներ

1. Հետևել հաճախումներին
2. Հետևել կարգապահությանը
3. Հետևել հերթապահությանը դասարանում

Շաբաթվա աշխատանքներ

1. Անցկացնել դասղեկական ժամեր
2. Կատարել այլ պլանավորված աշխատանքներ

Ամենամսյա աշխատանքներ

1. Նախապատրաստել և կազմակերպել սովորողների մասնակցությունը դպրոցական գործընթացներին
2. Օգնել դասարանական խորհրդին՝ ամփոփելու դասարանի կենսագործունեության փուլերի աշխատանքը
3. Դուրս բերել սովորողների բացակայությունները և գնահատականները: 6 օր անընդմեջ և ամսեկան 12 օր բացակայած աշակերտների անունները ներկայացնել ՄԿԱ գծով տեղակալ Գ. Հակոբյանին:
5. Օգտվել հոգեբանական ախտորոշիչ թեստերից , հարցաշարից , ախտորոշման այլ միջոցներից , դրանք նրբանկատորեն կիրառել դաստիարակչական աշխատանքում
6. Դուրս բերել նույն առարկայից 3 և ավելի անբավարար գնահատական ստացած սովորողների անունները
7. Դժվար դաստիարակվող աշակերտների բացահայտում,համապատասխան կանխարգելիչ և շտկողական աշխատանքներ ընտանիք-դպրոց –հոգեբան կապի միջոցով.

Դասարանի ղեկավարը(այսուհետ՝դասղեկ), իսկ տարրական դպրոցում՝ դասվարը

1. դաստիարակչական աշխատանք է կատարում իր դասարանի սովորողների շրջանում, հյտնաբերում է կյանքի դժվարին իրավիճակում հայտնված սովորողի (ընտանիքի) և դրա մասին մեկօրյա ժամկետում տեղեկացնում է դպրոցի տնօրենին՝ սերտորեն համագործակցելով մյուս մանկավարժական աշխատողների հետ
2. մասնակցում է իր ղեկավարած դասարանում սովորողների կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի դիտարկմանը, բացահայտմանը, գնահատմանը և մանկավարժահոգեբանական աջակցության համապատասխան ծառայությունների մշակմանը, դրանց ապահովմանը
3. նպաստում է սովորողների նկատմամբ դպրոցի և ընտանիքի միասնական մանկավարժական պահանջների կատարման ապահովմանը
4. անհրաժեշտության դեպքում սովորողների համար կազմակերպում է ուսումնական օգնություն
5. իրականացնում է դասարանի համար սահմանված գործավարությունը, էլեկտրոնային գրանցումները, դպրոցի տնօրինությանը ներկայացնում սովորողների առաջադիմության, հաճախումների և վարքի մասին տեղեկատվություն
6. կազմակերպում է սովորողների առողջության ամրապնդմանն ու ֆիզիկակակ զարգացմանը նպաստող միջոցառումներ, մրցույթներ, նպատակային էքսկուրսիաներ, շրջագայություններ և այլ միջոցառումներ
7. դպրոցի մանկավարժական խորհրդի քննարկմանն է ներկայացնում սովորողին խրախուսանքի կամ կարգապահական տույժի ներկայացնելու հարցը

ԿՐԹԱԿԱՆ - ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ (*դասարանի ընդհանուր բնութագիրը) –6-րդ ա դասարանում սովորում է 25*

աշակերտ՝ 20 աղջիկ, 5 տղա: Աշակերտական կոլեկտիվը համերաշխ է: Երեխաները ընկերասեր են, հանդուրժող: Աշակերտները աչքի են ընկնում ակտիվությամբ, դասարանն աղմկոտ է:Բոլոր աշակերտները փոխադրվել են 6-րդ դասարան: Նրանք ապահովել են կրթական չափորոշիչներով սահմանված գիտելիքների , կարողությունների և հմտությունների առնվազն պարտադիր նվազագույն մակարդակը:

2. Ռազմա – հայրենասիրական դաստիարակություն

Սովորեցնել, որ հայրենիքը սկսվում է բակից, տանից, դպրոցից: Այն պետք է պահել, սիրել և շենացնել: Ծանոթացնել պետական տոներին, պետության խորհրդանիշերին՝ դրոշին, զինանշանին, օրհներգին, ազգային հերոսներին: Ծանոթացնել ՀՀ բանակի ձևավորման գործընթացին: Արժևորել խաղաղության գինը: Ձևավորել հայրենասիրություն, համարձակություն, ազգային արժանապատվություն:

3. Ֆիզիկական դաստիարակություն

Ուսումնասիրել սովորողների տարիքային առանձնահատկությունները, հետևել նրանց հիգիենայի պահպանմանը, կազմակերպել նրանց ազատ ժամանակը՝ կազմակերպելով տարբեր սպորտային Խաղեր, հաճախ լինել բնության գրկում: Զրուցել ֆիզիկական դաստիարակության, առողջ Ապրելակերպի և ճիշտ սննդակարգի մասին: Բացատրել և պահանջել, որ աշակերտները հետևեն իրենց ֆիզպատրաստությանը:

4. Աշխատանքային դաստիարակություն

Ձևավորել սեր աշխատանքի նկատմամբ: Ամեն կերպ աշակերտներին մասնակից դարձնել տանը և դպրոցում կատարվող աշխատանքներին: սովորոցնել, որ մեզնից յուրաքանչյուրը

պետք է կատարի իր առջև դրված ցանկացած աշխատանք առանց բացատրությունների:

Դասարանում սահմանել հերթապահություն և հետևել դրա կատարմանը:

5. Հոգևոր դաստիարակություն

Պատմել հայ ժողովրդի քրիստոնեության ընդունման պատմությունը: Ծանոթացնել եկեղեցական տոների հետ, քննարկել դրանց նշման կարգերը և կանոնները: Աշակերտների հետ այցելել եկեղեցի, սովորեցնել, թե ինչպես պետք է դրսևորել այնտեղ: Սովորեցնել Տերունական աղոթքը:

6. Գեղագիտական դաստիարակություն

Սովորեցնել, որ ցանկացած պարագայում և միջավայրում պետք է տեսնել և գնահատել գեղեցիկը և շրջապատված լինել դրական էներգիայով: Ծանոթացնել ազգային արժեքներին՝ նկարչություն, պարարվեստ, գրականություն և այլն; Դրա համար հաճախ այցելել գեղագիտական կենտրոններ, թատրոն, պատկերասրահ: Հետևել, որ դրանք նպաստեն գեղագիտական ճաշակի ձևավորմանը:

Այցելել ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից իրականացվող <<Դպրոցական բաժանորդային համակարգ>> ծրագրի շրջանակներում թատրոն և թանգարան:

7. Բնապահպանական դաստիարակություն

Ծանոթացնել ՀՀ և ընդհանրապես երկիր մոլորակի բնապահպանական վիճակին և խնդիրներին:

Այնպես անել, որ յուրաքանչյուր սովորող իրեն համարի այդ բնության նկատմամբ պարտակա-նություններ ունեցող մեկը, ով պետք է պահպանի բնաշխարհը:

8. Դպրոց – ընտանիք կապը

Համագործակցել սովորողների ծնողների հետ, ծանոթացնել ծնողի իրավունքներին և պարտականություններին, նրանց ներգրավել համադպրոցական միջոցառումներին:

Ուսումնասիրել յուրաքանչյուր աշակերտի ընտանեկան պայմանները: Անհրաժեշտության դեպքում օգնել մեթոդական խորհուրդներով, կազմակերպել զրույցներ:

Դասարանի ղեկավարի դաստիարակչական աշխատանքների թեմատիկան

Ժամկետ	Աշխատանքի բովանդակությունը	Կատարող	Նշումներ
01.09.2022	Ավագի, աշակերտական ակտիվի փակ գաղտնի ընտրություն: Զրույց <<Գիտելիքի օր>> թեմայով:	Դասղեկ	
04.09-08.09	Կարգապահական խնդիրների քննարկում: Զրույց <<Աշակերտի վարքի կանոնները>> թեմայով:	Դասղեկ	
11.09-15.09	Զրույց <<Անձնական հիգիենա>> թեմայով:	Դասղեկ, բուժքույր	
18.09-22.09	Զրույց <<ՀՀ անկախություն>> թեմայով:	Դասղեկ	
25.09-29.09	Զրույց –քննարկում <<Իմ հարազատ դպրոցը>> թեմայով:	Դասղեկ	
02.10-06.10	Զրույց-քննարկում <<Մեր քաղաքը >> թեմայով	Դասղեկ	
9.10-13.10	Զրույց <<Իմ ընկերը>> թեմայով:	Դասղեկ	
16.10-20.10	Զրույց -քննարկում <<Համացանցը իմ կյանքում>> թեմայով:	Դասղեկ	
30.10-03.11	Զրույց- քննարկում սովորողների առաջադիմության թեմայով:	Դասղեկ	
06.11-10.11	Զրույց <<Անվտանգ երթևեկություն>> թեմայով:	Դասղեկ	
13.11-17.11	Զրույց <<Բնապահպանության կանոնները>> թեմայով:	Դասղեկ	
20.11-24.11	Զրույց <<Իմ ընտանիքը>> թեմայով:	Դասղեկ	
27.11-01.12	Զրույց- քննարկում <<Իմ դասընկերները: Համերաշխ դասարան>> թեմայով: Ինչպիսի ընկեր եմ ես և ինչպիսին կուզենամ, որ լինեն իմ ընկերները:	Դասղեկ	
04.12-08.12	Զրույց <<Տարհանման կանոնները աղետների դեպքում>> թեմայով	Դասղեկ	
11.12-15.12	Զրույց <<Աշխարհն իմ աչքերով>> թեմայով	Դասղեկ	
18.12-22.12	Պատրաստվում ենք Ամանորին	Դասղեկ	
08.01.-12.01	Տվյալ բնակավայրում, տարածքում հնարավոր բնական աղետները	Զինղեկ, դասղեկ	
15.01-19.01	Տվյալ բնակավայրում, տարածքում հնարավոր բնական աղետները	Զինղեկ	
22.01-26.01	Հնարավոր բնական աղետների կանխարգելման նպատակով իրականացվող հիմնական միջոցառումները	Զինղեկ	
29.01-02.02	Տվյալ բնակավայրի, տարածքի բնական աղետների ռիսկի քարտեզի կազմում:	Զինղեկ	

05.02-09.02	Տվյալ բնակավայրի, տարածքի բնական աղետների ռիսկի քարտեզի կազմում:	Զինղեկ	
12.02-16.02	Աշակերտի գործողությունները՝ հնարավոր բնական աղետների ժամանակ:	Զինղեկ	
19.02-23.02	Աշակերտի գործողությունները՝ հնարավոր բնական աղետների ժամանակ:	Զինղեկ	
26.02-01.03	Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության համակարգը, խնդիրները	Զինղեկ	

Ժամկետ	Աշխատանքի բովանդակությունը	Կատարող	Նշումներ
04.03-08.03	Զրույց <<Իմ թանկագին մայրիկ>> թեմայով:	Դասղեկ	
11.03-15.03	Զրույց <<Իմ դասարանը իմ տունն է>> թեմայով:	Դասղեկ	
18.03-22.03	Զրույց <<Իմ առաջադիմությունը>> թեմայով:	Դասղեկ	
01.04-05.04	Զրույց <<Հումորը իմ կյանքում>> թեմայով: Պատմել անեկդոտներ:	Դասղեկ	
08.04-12.04	Զրույց <<Ում եմ համարում գեղեցիկ մարդ>> թեմայով:	Դասղեկ	
15.04-19.04	Զրույց <<Երբ աշխատանքը միայն ուրախություն է>> թեմայով:	Դասղեկ	
22.04-26.04	Ապրելու ապրիլ	Դասղեկ	
29.05-03.05	Զրույց <<Մեր հաղթանակների մայիսը>> թեմայով:	Դասղեկ	
06.05-10.05	Զրույց <<Ինչ գեղեցիկ է աշխարհը>> թեմայով:	Դասղեկ	
13.05-17.05	Զրույց <<Ով է համարվում հայրենասեր>> թեմայով:	Դասղեկ	
20.05-24.05	Տարվա ամփոփում: Դասագրքերի ստուգում	Դասղեկ, աշակերտներ	

Ծնողական ժողովների թեմատիկան

Ժամկետ	Աշխատանքի բովանդակությունը	Կատարող	Նշումներ
Սեպտեմբեր	1. Կազմակերպչական հարցեր 2. Ծնողխորհրդի կազմի ընտրությունը	Դասղեկ	
Հոկտեմբեր	1. Երկամսյակի ամփոփում 2. Ընթացիկ հարցեր	Դասղեկ	
Հունվար	1. Առաջին կիսամյակի ամփոփում 2. Ուսումնական գործընթացի հետ կապված հարցերի քննարկում	Դասղեկ	
Մայիս	1. Տարվա ամփոփում 2. Էքսկուրսիայի կազմակերպման հարցեր	Դասղեկ, ծնողներ	